

# ՀԱՐՑԱՇԱՐ

## ՀՀ հանրային հատվածի որակավորված ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման 2022 թվականի դասընթացի թեստավորման

**Հարց 1.** Ի՞նչ է ներքին աուդիտը.

- անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է կազմակերպության գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետ)*

**Հարց 2.** Ներքին աուդիտի իրականացման նպատակով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը.

- ներքին աուդիտի համակարգն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետ)*

**Հարց 3.** Ինչպե՞ս է սահմանվում նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախապես սահմանված որակի պահպանմամբ նախատեսված ռեսուրսների նվազեցումը.

- տնտեսող գործառույթ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետ)*

**Հարց 4.** Ինչպե՞ս է սահմանվում գործառույթի արդյունքի կամ նպատակի իրագործման աստիճանը, այսինքն՝ գործառույթի արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը.

- արդյունավետ գործառույթ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետ)*

**Հարց 5.** Ինչպե՞ս է սահմանվում տրված ռեսուրսների (ներդրումների) պարագայում գործառույթի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովումը.

- օգտավետ գործառույթ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 7-րդ կետ)*

**Հարց 6.** Ներքին աուդիտը.

- աջակցում է կազմակերպության ղեկավարին, որը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանող և արդյունավետ ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի առկայության ապահովման համար

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մաս)*

**Հարց 7.** Ներքին աուդիտի անկախությունը.

- ներքին աուդիտի գործառույթի՝ կազմակերպության այլ գործառույթներից առանձնացված իրականացումն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ կետ)*

**Հարց 8.** Ներքին աուդիտորների կողմից աուդիտի ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում մասնագիտական անշահախնդրության անվերապահ ցուցաբերումը.

- ներքին աուդիտորների օբյեկտիվությունն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 12-րդ կետ)*

**Հարց 9.** Ներքին աուդիտորների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների, փորձառության և իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ այլ կարողությունների տիրապետումը և կիրառումը.

- ներքին աուդիտորների կարողունակությունն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետ)*

**Հարց 10.** Ներքին աուդիտորների՝ իրենց աշխատանքի ազնիվ և պատասխանատու իրականացումը.

- ներքին աուդիտորների անկողմնակալությունն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետ)*

**Հարց 11.** Ներքին աուդիտորների՝ աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների հուսալի պահպանումը

- գաղտնիությունն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 15-րդ կետ)*

**Հարց 12.** Ո՞ր փաստաթղթով են սահմանվում ներքին աուդիտի նպատակը, լիազորությունները և պարտականությունները.

- ներքին աուդիտի կանոնակարգով

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետ)*

**Հարց 13.** Ներքին աուդիտի կոնկրետ առաջադրանքը կամ ուսումնասիրությունը, որը ներառում է հավաստիացման կամ խորհրդատվության ծառայություն.

- աուդիտորական առաջադրանքն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 19-րդ կետ)*

**Հարց 14.** Ներքին աուդիտի կոմիտեն.

- կազմակերպության ղեկավարի ձևավորած և նրա կողմից ղեկավարվող կոլեգիալ մարմին է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 21-րդ կետ)*

**Հարց 15.** Ներքին աուդիտի սկզբունքներն են.

- անկախությունը, գաղտնիությունը, կարողունակությունը, օբյեկտիվությունը, անկողմնակալությունը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մաս)*

**Հարց 16.** Ո՞ւմ ենթակայությամբ է գործում ներքին աուդիտի համակարգը ՀՀ Ազգային ժողովում.

- ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ)*

**Հարց 17.** Ո՞վ է ապահովում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը, եթե աուդիտն իրականացնում են հրավիրված անձինք.

- հրավիրված անձինք

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս)*

**Հարց 18.** Ո՞վ է ապահովում կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը.

- կազմակերպության ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մաս)*

**Հարց 19.** Ո՞վ է սահմանում ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները.

- լիազոր մարմինը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մաս)*

**Հարց 20.** Ո՞վ է հաստատում կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս)*

**Հարց 21.** Ո՞րն է անկախության սահմանումը

- ներքին աուդիտի գործառույթի՝ կազմակերպության այլ գործառույթներից առանձնացված իրականացում

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 11-րդ կետ)*

**Հարց 22.** Ո՞րն է կարողունակության սահմանումը

- ներքին աուդիտորների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների, փորձառության և իրենց պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ այլ կարողությունների տիրապետումը և կիրառումը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 13-րդ կետ)*

**Հարց 23.** Ո՞րն է անկողմնակալության սահմանումը

- ներքին աուդիտորների՝ իրենց աշխատանքի ազնիվ և պատասխանատու իրականացում

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 14-րդ կետեր)*

**Հարց 24.** Ներքին աուդիտի համակարգը՝

- գործում է կազմակերպության ղեկավարի ենթակայությամբ  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս)

**Հարց 25.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ընդհանուր գործունեության համար պատասխանատու է՝

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս)

**Հարց 26.** Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի կանոնակարգը

- կազմակերպության ղեկավարը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 18-րդ կետ)

**Հարց 27.** Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի հաշվետվությունը

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մաս)

**Հարց 28.** Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի ստանդարտները և ներքին աուդիտորների վարքագծի կանոնները

- ՀՀ կառավարությունը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ)

**Հարց 29.** Ռիսկը՝

- իրադարձության տեղի ունենալու հավանականությունն է, որը կարող է ազդել կազմակերպության նպատակների իրագործման վրա  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետ)

**Հարց 30.** Կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները համարվում են՝

- ներքին աուդիտի շրջանակ  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մաս)

**Հարց 31.** Կազմակերպության նպատակների իրականացման համար ռիսկերի

բացահայտման, գնահատման և հսկման գործընթացը.

- ռիսկերի կառավարումն է

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ կետ)*

**Հարց 32.** Կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջությունը, որով ողջամի ձևով երաշխավորվում է կազմակերպության նպատակների իրականացումը՝

- ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերն են

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետ)*

**Հարց 33.** Կազմակերպության նպատակների իրականացման ռիսկերի կանխմանը կամ նվազեցմանն ուղղված կազմակերպության ղեկավարության գործողությունները սահմանվում են որպես.

- հսկողություն

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 10-րդ կետ)*

**Հարց 34.** Ռիսկը չափվում է.

- ազդեցությամբ և տեղի ունենալու հավանականությամբ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 8-րդ կետ)*

**Հարց 35.** Պետական ներքին ֆինանսական հսկողության նպատակն է ապահովել պատշաճ հավաստիացում, որ գործարքները համապատասխանում են.

- որակյալ ֆինանսական կառավարման, թափանցիկության, արդյունավետության, օգտավետության և տնտեսման սկզբունքներին, ինչպես նաև համապատասխան օրենսդրությանը

*(ՀՀ կառավարության 11.11.2010թ. նիստի N 44 արձանագրային որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետ)*

**Հարց 36.** Պետական ներքին ֆինանսական հսկողության հիմնական բաղադրիչ չի համարվում.

- տարեկան կտրվածքով իրականացվող պարտադիր ֆինանսական հաշվետվությունների աուդիտը

*(ՀՀ կառավարության 11.11.2010թ. նիստի N 44 արձանագրային որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետ)*

**Հարց 37.** Եթե աուդիտն իրականացնում են հրավիրված անձինք, ապա

- վերջիններս են ապահովում աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մաս)*

**Հարց 38.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների համար հասանելի են կազմակերպության գործունեության վերաբերյալ.

- ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի, և բոլոր գրառումները, այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մաս)*

**Հարց 39.** Ո՞ր դեպքում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է մշակել առանձին մեթոդաբանություն ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համար.

- անհրաժեշտության դեպքում՝ խորհրդակցելով լիազոր մարմնի հետ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ)*

**Հարց 40.** Ո՞վ պետք է հետևի ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը և ներքին աուդիտի մեթոդաբանության իրականացմանը.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ)*

**Հարց 41.** Անձը կարող է նշանակվել որպես ուսուցանվող աուդիտոր.

- մինչև երեք տարի ժամկետով

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մաս)*

**Հարց 42.** Քանի անգամ կարող է անձը նշանակվել որպես ուսուցանվող աուդիտոր.

- միայն մեկ անգամ

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մաս)*

**Հարց 43.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնում է այն անձը, ով.

- ունի առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ աուդիտի ոլորտում և ընդգրկված է ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մաս)*

**Հարց 44.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին և աուդիտորին պաշտոնի նշանակում կամ պաշտոնից ազատում է.

- կազմակերպության ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մաս)*

**Հարց 45.** Ներքին աուդիտի պլանավորումը կատարվում է.

- ռիսկերի գնահատման հիման վրա

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մաս)*

**Հարց 46.** Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը հաստատվում են.

- մինչև տվյալ տարվա հունվարի 1-ը,

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մաս)*

**Հարց 47.** Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը և դրանց փոփոխությունները հաստատում է.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս)*

**Հարց 48.** Ո՞վ է վավերացնում կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը և դրանց փոփոխությունները.

- կազմակերպության ղեկավարը

*(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս)*



**Հարց 49.** Նշվածներից ո՞րը չի ներառվում ներքին աուդիտի իրականացման տարեկան հաշվետվությունում.

- ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման արդյունքները  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս)

**Հարց 50.** Ո՞ւմ կողմից է քննարկվում ներքին աուդիտի հաշվետվությունը.

- կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մաս)

**Հարց 51.** Ո՞վ է պատրաստում ներքին աուդիտի իրականացման տարեկան հաշվետվությունը.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս)

**Հարց 52.** Ո՞ւմ է ներկայացվում ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը.

- կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մաս)

**Հարց 53.** Ե՞րբ է ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը լիազոր մարմին ներկայացվում.

- մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս)

**Հարց 54.** Ո՞ւմ միջոցով են պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպությունները ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունները լիազոր մարմին ներկայացնում.

- տվյալ կազմակերպության կառավարումն իրականացնող մարմնի («Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս)

**Հարց 55.** Ո՞վ է պատասխանատու միջազգայնորեն ճանաչված ստանդարտների և հաջողված փորձի հիման վրա ներքին աուդիտի օրենսդրության և մեթոդաբանության մշակմանն ու ներդրմանն օժանդակելու համար.

- լիազոր մարմինը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս)

**Հարց 56.** Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի ստանդարտները և ներքին աուդիտորների վարքագծի կանոնները.

- ՀՀ կառավարությունը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ)

**Հարց 57.** Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի վերաբերյալ մեթոդական ցուցումները (ուղեցույցները), ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները.

- լիազոր մարմինը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ)

**Հարց 58.** Ո՞ր մարմինն է համակարգում և դիտարկում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջների և ներքին աուդիտի մեթոդաբանության կիրառման գործընթացը.

- լիազոր մարմինը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մաս)

**Հարց 59.** Ե՞րբ է լիազոր մարմնի կողմից հրապարակվում ներքին աուդիտի համակարգի մասին նախորդ տարվա հաշվետվությունը.

- մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 1-ը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ)

**Հարց 60.** Ո՞վ է ստեղծում և վարում կազմակերպությունների ներքին աուդիտի ստորաբաժանումների, ներքին աուդիտորների, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանումների կանոնակարգերի գրանցամատյանը.

- լիազոր մարմինը  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետ)

**Հարց 61.** ՀՀ հանրային հատվածի կազմակերպության ներքին աուդիտի որակի երաշխավորման նպատակով՝ վերջինիս ներքին աուդիտի համակարգի

զնահատումներն իրականացվում են.

- կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մաս)

**Հարց 62.** Ո՞ւմ են տեղեկացնում ներքին աուդիտորները բացահայտված կեղծիքի նշանների մասին.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս)

**Հարց 63.** Ո՞ւմ է հաշվետու ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը.

- կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին  
(«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս)

**Հարց 64.** Ո՞ւմ է տեղեկացնում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը բացահայտված կեղծիքի նշանների մասին.

- կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին («Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մաս)

**Հարց 65.** Ո՞ր մարմինն է համարվում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմինը.

- ՀՀ ֆինանսների նախարարությունը  
(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետ)

**Հարց 66.** Նշվածներից ո՞րոնք չեն հանդիսանում ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներ.

- բացահայտող ստանդարտներ  
(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետ)

**Հարց 67.** Բնութագրող ստանդարտներում դիտարկվում են.

- ներքին աուդիտով զբաղվող կազմակերպությունների և կողմերի հիմնական հատկորոշիչ առանձնահատկությունները  
(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 4-րդ կետ)

**Հարց 68.** Գործառնական ստանդարտները նկարագրում են.

- ներքին աուդիտի էությունը և տալիս ներքին աուդիտի գործունեության գնահատման որակական չափորոշիչները

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 5-րդ կետ)*

**Հարց 69.** Կիրառական ստանդարտները վերաբերում են.

- աուդիտորական հավաստիացումների տրամադրման գործունեությանը և խորհրդատվական գործունեությանը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 6-րդ կետ)*

**Հարց 70.** Հավաստիացման ծառայությունները ներառում են աուդիտորական ապացույցների օբյեկտիվ գնահատականը, որը տրվում է.

- ներքին աուդիտի կողմից

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 71.** Ո՞վ է որոշում հավաստիացումն ապահովելու նպատակով իրականացվող աուդիտի բնույթը և ծավալը.

- ներքին աուդիտորը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 72.** Նշվածներից ո՞րը հավաստիացման ծառայությունների տրամադրման գործընթացում ներգրավված կողմ չէ.

- լիազոր մարմինը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 73.** Որպես կանոն, ու՞մ հատուկ պահանջով են տրամադրվում խորհրդատվական ծառայությունները.

- կազմակերպության ղեկավարի

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 8-րդ կետ)*

**Հարց 74.** Ո՞րոնք են խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված է երկու կողմերը.

- ներքին աուդիտորը և կազմակերպության ղեկավարը

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 9-րդ կետ)

**Հարց 75.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է.

- պարբերաբար վերանայի ներքին աուդիտի կանոնակարգը և այն ներկայացնի կազմակերպության ղեկավարի հաստատմանը

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 11-րդ կետ)

**Հարց 76.** Ներքին աուդիտի գործառույթները.

- պետք է լինեն անկախ, և ներքին աուդիտորները պետք է լինեն օբյեկտիվ՝ իրենց աշխատանքն իրականացնելիս

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 14-րդ կետ)

**Հարց 77.** Ո՞ր դեպքում է հնարավոր ներքին աուդիտի կազմակերպական անկախության արդյունավետ կերպով ապահովումը.

- երբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը գործառութային տեսանկյունից հաշվետու է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետ)

**Հարց 78.** Ինչպե՞ս պետք է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը շփվի և փոխհարաբերվի կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ.

- ուղղակիորեն

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 17-րդ կետ)

**Հարց 79.** Ո՞ր իրավիճակում է ներքին աուդիտորի մոտ առաջանում շահերի բախում.

- երբ ներքին աուդիտորի մոտ առկա է մասնագիտական և անձնական շահերի հակասություն

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 18-րդ կետ)

**Հարց 80.** Ո՞ւմ կողմից են վերահսկվում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պատասխանատվության ներքո գտնվող գործառույթների գծով իրականացվող աուդիտորական աշխատանքները.

- պետք է վերահսկվեն երրորդ անձի կողմից

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետ)*

**Հարց 81.** Ո՞ր դեպքում է համարվում, որ օբյեկտիվությունը ենթարկվում է բացասական ներգործության.

- երբ ներքին աուդիտորը տալիս է հավաստիացում այնպիսի գործառույթների գծով, որոնց համար նա պատասխանատու է եղել նախորդ տարվա ընթացքում

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետ)*

**Հարց 82.** Կարո՞ղ են արդյոք ներքին աուդիտորները տրամադրել խորհրդատվական ծառայություններ, որոնք առնչվում են այն գործառույթներին, որոնց գծով նրանք նախկինում պատասխանատու են եղել.

- կարող են

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետ)*

**Հարց 83.** Ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում, երբ ներքին աուդիտորներն աուդիտի առաջադրանքի կամ դրա մի մասի իրականացման համար չեն տիրապետում բավարար գիտելիքների ու հմտությունների.

- կազմակերպության ղեկավարը պետք է ապահովի, որ աուդիտի ստորաբաժանումն ստանա անհրաժեշտ խորհրդատվություն կամ աջակցություն

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 23-րդ կետ)*

**Հարց 84.** Ներքին աուդիտորներն իրենց գիտելիքները և հմտությունները.

- պետք է կատարելագործեն շարունակական մասնագիտական վերապատրաստման միջոցով

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 26-րդ կետ)*

**Հարց 85.** Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը.

- պետք է մշակի և կիրառի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը  
(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 27-րդ կետը)

**Հարց 86.** Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը.

- գնահատում է ներքին աուդիտի գործառույթի արդյունավետությունն ու օգտավետությունը, ինչպես նաև բացահայտում է բարելավման հնարավորությունները  
(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 27-րդ կետը)

**Հարց 87.** Որակի երաշխավորման ու բարելավման ծրագրի ներքին գնահատումը.

- պետք է ներառի ներքին աուդիտի գործունեության ընթացիկ դիտարկումը և պարբերաբար կատարվող ուսումնասիրությունները  
(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 29-րդ կետը)

**Հարց 88.** Որակի երաշխավորման ու բարելավման ծրագրի արտաքին գնահատումը պետք է իրականացվի.

- առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ

(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 30-րդ կետը)

**Հարց 89.** Ո՞ւմ կողմից պետք է իրականացվի որակի երաշխավորման ու բարելավման ծրագրի արտաքին գնահատումը.

- կազմակերպության աշխատող չհանդիսացող որակավորված անկախ անձի կամ խմբի կողմից

(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 30-րդ կետը)

**Հարց 90.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը որակի երաշխավորման ու բարելավման ծրագրի արդյունքների մասին.

- պետք է զեկուցի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին

(«Կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 31-րդ կետը)

**Հարց 91.** Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքների մասին հաշվետվությունների ձևաչափը, բովանդակությունը և դրանք ներկայացնելու հաճախականությունը.

- որոշվում են կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկումների արդյունքում

*(«Հ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 31-րդ կետ)*

**Հարց 92.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է հայտարարել, որ ներքին աուդիտի գործառույթները համապատասխանում են ներքին աուդիտի ստանդարտներին և դրանց կիրառման ցուցումներին միայն այն դեպքում, երբ.

- դրա մասին են վկայում ներքին աուդիտի որակի երաշխավորման ու բարելավման ծրագրի արդյունքները

*(«Հ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 32-րդ կետ)*

**Հարց 93.** Եթե ներքին աուդիտի իրականացման ընթացքում ներքին աուդիտի սահմանման, ստանդարտների ու վարքագծի կանոնների չպահպանելն ազդում է ներքին աուդիտի ընդհանուր գործունեության կամ շրջանակների վրա, ապա ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը այդ մասին պետք է.

- տեղեկացնի կազմակերպության ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին

*(«Հ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 33-րդ կետ)*

**Հարց 94.** Ո՞վ պետք է սահմանի կազմակերպության ներքին աուդիտի աշխատանքներն ուղղորդելու համար քաղաքականություն և ընթացակարգեր.

- կազմակերպության ղեկավարը

*(«Հ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 39-րդ կետ)*

**Հարց 95.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին աուդիտի գործունեության նպատակների, լիազորությունների, պարտականությունների և ծրագրերի համեմատ կատարողականի մասին.

- պետք է պարբերաբար ներկայացնի հաշվետվություն կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին



*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 41-րդ կետ)*

**Հարց 96.** Ներքին աուդիտի գործունեության նպատակների, լիազորությունների, պարտականությունների և ծրագրերի մասին հաշվետվությունների ներկայացման հաճախականությունն ու դրանց բովանդակությունը որոշվում են.

- կազմակերպության ղեկավարի ու ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկումների արդյունքում

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 41-րդ կետ)*

**Հարց 97.** Ներքին աուդիտի աշխատանքի բնույթն է.

- կազմակերպության կառավարչական գործընթացների, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների գնահատումը և նպաստումը դրանց բարելավմանը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 43-րդ կետ)*

**Հարց 98.** Ներքին աուդիտորները աուդիտի նպատակներին հասնելու համար պետք է նախատեսեն բավարար ռեսուրսներ.

- հիմնվելով յուրաքանչյուր աուդիտի բնույթի, բարդության, ժամանակային սահմանափակումների և առկա ռեսուրսների գնահատականների վրա

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 57-րդ կետ)*

**Հարց 99.** Աշխատանքային ծրագրով աուդիտի ընթացքում ի՞նչ ընթացակարգեր պետք է սահմանվեն տեղեկատվության մասով.

- բացահայտման, գնահատման, վերլուծության և փաստաթղթավորման ընթացակարգեր

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 59-րդ կետ)*

**Հարց 100.** Ե՞րբ է հաստատվում աշխատանքային ծրագիրը.

- նախքան աուդիտի սկիզբը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 59-րդ կետ)*

**Հարց 101.** Ո՞վ պետք է իրականացնի աուդիտի փաստաթղթերի հասանելիության նկատմամբ հսկողություն.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 64-րդ կետ)

**Հարց 102.** Ինչպե՞ս են աուդիտի փաստաթղթերը տրամադրվում երրորդ կողմին.

- կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 64-րդ կետ)

**Հարց 103.** Աուդիտին վերաբերող փաստաթղթերի պահպանման համար.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է մշակի պահանջներ

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 64-րդ կետ)

**Հարց 104.** Ինչո՞ւ պետք է վերահսկվի ներքին աուդիտի իրականացումը.

- որպեսզի երաշխավորվեն նպատակների իրականացումը, պահանջվող որակը և աշխատակազմի որակավորման բարձրացումը

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 65-րդ կետ)

**Հարց 105.** Եթե աուդիտի արդյունքների մասին հաշվետվության վերջնական տարբերակում առկա են էական սխալներ կամ բացթողումներ, ապա

- աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է ճշգրտված տեղեկատվությունը տրամադրի այն բոլոր անձանց, ովքեր ստացել են հաշվետվության բնօրինակը

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 70-րդ կետ)

**Հարց 106.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, եթե այլ պահանջ սահմանված չէ, աուդիտի կատարման արդյունքները պետք է տրամադրի համապատասխան կողմերին, բացառությամբ.

- լիազոր մարմնի

(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 73-րդ կետ)

**Հարց 107.** Ո՞վ պետք է ներդնի ներքին աուդիտի արդյունքների հիման վրա ղեկավարության կողմից իրականացված միջոցառումների գնահատման և դիտարկման համակարգը.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 76-րդ կետ)*

**Հարց 108.** Ի՞նչ պետք է կատարի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, երբ գտնում է, որ կազմակերպության առանձին ղեկավար պաշտոնատար անձն ստանձնել է մնացորդային ռիսկերի այնպիսի մակարդակ, որն անընդունելի է կազմակերպության համար, ապա աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է.

- այդ հարցը քննարկի նշված պաշտոնատար անձի հետ

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 1-ին հավելվածի 78-րդ կետ)*

**Հարց 109.** Ներքին աուդիտորները պահպանում են կարողունակության կանոնը, եթե.

- մասնակցում են միայն այնպիսի աշխատանքներում, որոնց իրականացման համար ունեն բավարար մասնագիտական գիտելիքներ, հմտություն և փորձ

*(ՀՀ կառավարության 11.08.2011թ. N 1233-Ն որոշման 2-րդ հավելվածի 13-րդ կետ)*

**Հարց 110.** Հանրային հարվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները տրամադրում են.

- ներքին աուդիտի մշակման և իրականացման ընդհանուր ցուցումներ՝ չընդգրկելով տեխնիկական և մեթոդական առումով ողջ հանրային ոլորտում հանդիպող բոլոր դեպքերը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետ)*

**Հարց 111.** Նշվածներից ո՞րն է ներքին աուդիտի գործունեության նպատակներից.

- հավաստիացնել կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին, որ կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 112.** Հանրային հատվածի կազմակերպություններում ներքին

աուդիտի գործունեության նպատակներից չէ.

- պատասխանատվության ենթարկել խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի մասնակիցներին

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 8-րդ կետը)*

**Հարց 113.** Ներքին աուդիտի ստորաբաժանումը պատասխանատվություն չի կրում.

- ստորաբաժանումների ֆինանսական կառավարման ու քաղաքականության մշակման համար

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 11-րդ և 14-րդ կետերը)*

**Հարց 114.** Ո՞վ է պատասխանատու կազմակերպությունում խարդախության կանխման, բացահայտման և ուսումնասիրման համար.

- կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 16-րդ կետը)*

**Հարց 115.** Նշվածներից ո՞ր գործողությունները չեն կարող ընդգրկվել ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքներում.

- ֆինանսական և գործառնական տեղեկատվության հավաստիությունն ու հուսալիությունն ապահովող ընթացակարգերի ներդրումը

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 17-րդ կետը)*

**Հարց 116.** Ներքին աուդիտի կանոնակարգը և դրանում փոփոխությունները մշակվում են.

- ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 19-րդ կետը)*

**Հարց 117.** Ներքին աուդիտի կանոնակարգը չի սահմանում

- կազմակերպության խնդիրները, նպատակները և ծրագրերը

*(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 19-րդ կետը)*

**Հարց 118.** Ներքին աուդիտի կանոնակարգի պարբերական գնահատումների արդյունքները.

- պետք է ներկայացվեն կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը և հաստատվեն կազմակերպության ղեկավարի կողմից

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետ)*

**Հարց 119.** Ներքին աուդիտի ստորաբաժանումն իրականացնում է.

- հավաստիացման տրամադրում և խորհրդատվություն

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 21-րդ կետ)*

**Հարց 120.** Ե՞րբ է կազմակերպության ղեկավարին ներկայացվում իրականացված գնման ընթացակարգի մասով աուդիտի գրավոր հաշվետվությունը.

- գնման ընթացակարգի արձանագրությունը հաստատվելու օրվանից երկու ամսվա ընթացքում

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 23.1-րդ կետ)*

**Հարց 121.** Ե՞րբ է կազմակերպության ղեկավարին ներկայացվում գնման գործընթացների շրջանակում իրականացված պայմանագրի կատարման մասով աուդիտի գրավոր հաշվետվությունը.

- պայմանագրի կատարման արդյունքն ընդունվելու օրվանից չորս ամսվա ընթացքում

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 23.1-րդ կետ)*

**Հարց 122.** Ինչի՞ համար է նախատեսված կատարողականի աուդիտը.

- գործընթացները տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից գնահատելու համար

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 25-րդ կետ)*

**Հարց 123.** Ինչպիսի՞ ընթացակարգեր են օգտագործվում ֆինանսական աուդիտի ընթացքում.

- վերլուծական ընթացակարգեր և մանրամասների ստուգման ընթացակարգեր  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 30-րդ կետը)

**Հարց 124.** Ո՞րն է ֆինանսական աուդիտի նպատակը.

- գնահատել ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 30-րդ կետը)

**Հարց 125.** Խորհրդատվական ծառայություններ մատուցելիս ներքին աուդիտորները.

- ուսումնասիրում են տվյալ ոլորտի հետագա հնարավոր նախագծումը  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 32-րդ կետը)

**Հարց 126.** Ո՞վ է խորհրդատվական ծառայությունների շրջանակում ներքին աուդիտի կողմից տրամադրված առաջարկությունների և խորհուրդների իրագործման վերջնական որոշման կայացողն ու պատասխանատուն.

- կազմակերպության ղեկավարն է  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 34-րդ կետը)

**Հարց 127.** Խարդախության դեմ պայքարի և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի մասով ներքին աուդիտի ստորաբաժանումը.

- պատասխանատվություն չի կրում  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 35-րդ կետը)

**Հարց 128.** Ներքին աուդիտորն իրավունք ունի.

- օգտվել աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից, այդ թվում գաղտնի տեղեկատվությունից՝ համաձայն «Օրենսդրությամբ

նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 37-րդ  
կետը»)

**Հարց 129.** Երբ ներքին աուդիտորն ուսումնասիրում է կազմակերպության աուդիտի ենթարկվող միավորի ներսում իր կամ իր գործընկերների կողմից կատարված աշխատանքը, նրա անկախությանը կարող է սպառնալ.

- ինքնաստուգման վտանգ

(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 44-րդ  
կետը»)

**Հարց 130.** Երբ ներքին աուդիտորն իրականացնում է այնպիսի աշխատանք, որի արդյունքները կամ որոշումները կարող են առաջացնել ղեկավարության պատասխանատվություն, նրա անկախությանը կարող է սպառնալ.

- կառավարման վտանգ

(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 44-րդ  
կետը»)

**Հարց 131.** Երբ ներքին աուդիտորը կազմակերպության աուդիտի ենթարկվող միավորի կրտսեր աշխատակցի մտերիմ ընկերն է, նա.

- չպետք է իրականացնի աուդիտորական գործունեություն այն բաժնում, որտեղ աշխատում է այդ աշխատակիցը

(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 45-րդ  
կետը»)

**Հարց 132.** Ներքին աուդիտորների կարողունակությանը ներկայացվող պահանջներից չէ.

- աուդիտորական առաջադրանքի եզրակացությունների համար հուսալի հիմք հանդիսացող բոլոր փաստերի խնամքով և բավարար կերպով հավաքելու կարողությունը

(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 49-րդ  
կետը»)

**Հարց 133.** Նշվածներից ո՞ր աշխատանքը ներքին աուդիտի ստորաբաժանման

ղեկավարը չի իրականացնում ներքին աուդիտի գործառույթների կազմակերպման և իրականացման շրջանակներում.

- ներքին աուդիտի ստորաբաժանման որակի արտաքին գնահատում  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 56-րդ կետը)

**Հարց 134.** Նշվածներից ո՞րն է ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի պարտականություն.

- մասնակցում է աուդիտորական առաջադրանքի արդյունքների վերաբերյալ հաշվետվության կազմման աշխատանքներին  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 57-րդ կետը)

**Հարց 135.** Ո՞վ է կայացնում ներքին աուդիտի աշխատանքներում փորձագետներ կամ խորհրդատուներ ներգրավելու մասին որոշում՝ ներքին աուդիտորների կարողունակությունը չբավարարելու հանգամանքներում.

- կազմակերպության ղեկավարը  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 59-61-րդ կետերը)

**Հարց 136.** Նշվածներից ո՞ր պայմանագիրն է կնքվում փորձագետների և/կամ խորհրդատուների հետ.

- ծառայությունների մատուցման պայմանագիր՝ դրանում ներառելով աշխատանքների շրջանակները, նպատակները, տրամադրվող հաշվետվությունների կազմը, ժամկետները, փորձագետների իրավունքները և այլն  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 63-րդ կետը)

**Հարց 137.** Ներքին աուդիտի ենթակա միջավայրն ընդգրկում է.

- կազմակերպության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները՝ ներառյալ համակարգի կազմակերպությունները՝ պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, փակ բաժնետիրական



ընկերությունները

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 65-66-րդ կետեր)*

**Հարց 138.** Այն դեպքում, երբ կազմակերպությունում ներքին աուդիտն իրականացվում է մասնավոր կազմակերպության կողմից, ապա.

- վերջինս պետք է ապահովի իր առնվազն մեկ աշխատակցի մշտապես ներկայությունը կազմակերպությունում

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 68-րդ կետ)*

**Հարց 139.** Ո՞վ է վերջնական պատասխանատվություն կրում մասնավոր կազմակերպության ընտրության և մատուցված ներքին աուդիտի ծառայության որակի համար

- կազմակերպության ղեկավարը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 68-րդ կետ)*

**Հարց 140.** Աուդիտի միջավայրի տարրերի որոշման հորիզոնական մոտեցումը.

- ընդգրկում է կազմակերպության ներսում գործող բոլոր գործընթացները և ծրագրերը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 71-րդ կետ)*

**Հարց 141.** Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը.

- աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ է, որը մշակում և հաստատում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 77-րդ և 80-րդ կետեր)*

**Հարց 142.** Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի ո՞ր փուլում է իրականացվում կազմակերպության ներքին միջավայրի և կազմակերպության վրա ազդող արտաքին միջավայրի գործոնների ուսումնասիրությունը.

- կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրում

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 82-րդ*

**Հարց 143.** Ինչի՞ց չպետք է օգտվեն ներքին աուդիտորները կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրությունն իրականացնելու համար.

- ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրից  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 83-րդ կեր)

**Հարց 144.** Ե՞րբ է կիրառվում ՍՎՈԹ վերլուծությունը.

- ընդհանուր գործունեության ուսումնասիրության փուլում և ներառում է համակարգի վրա ազդող և՛ արտաքին, և՛ ներքին գործոնները  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 85-րդ կեր)

**Հարց 145.** Ե՞րբ է կիրառվում ՓԵՍԹ վերլուծությունը

- ընդհանուր գործունեության ուսումնասիրության փուլում և ներառում է քաղաքական, տնտեսական, սոցիալական և տեխնոլոգիական, ինչպես նաև իրավական, շրջակա միջավայրի և էթիկայի գործոններ  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 85-րդ կեր)

**Հարց 146.** Ի՞նչ է իրականացվում ռիսկերի գնահատման փուլում.

- որոշվում է տվյալ միավորում ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների իրականացման հաճախականությունը, ծավալները և խորությունը  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 91-րդ կեր)

**Հարց 147.** Ո՞ւմ են ներկայացվում կազմակերպության միավորների կողմից կազմված ռիսկերի գնահատման տեղեկագրերը, և ի՞նչ թվային մեծությամբ են գնահատվում ռիսկերը.

- ներկայացվում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ՝ ռիսկերին տալով 1-ից 4 թվային մեծությամբ գնահատական

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 93-րդ կետ)*

**Հարց 148.** Ռիսկերի վերլուծության ժամանակ ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից օգտագործվող չափորոշիչների քանակը.

- սահմանափակված չէ, սակայն պետք է բոլոր ջանքերը գործադրել չափորոշիչների քանակը 10-ից ցածր պահելու համար

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 96-րդ կետ)*

**Հարց 149.** Նշվածներից ո՞ր չափորոշիչն է պարտադիր բնույթ կրում.

- նախորդ տարվա ընտրանքի արդյունքներ

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 97-րդ և 105-րդ կետեր)*

**Հարց 150.** Ինչպիսի՞ բնույթի են ռիսկի չափորոշիչներին տրվող ուղղիչ գործակիցների արժեքները.

- հաստատուն և փոփոխուն

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 98-րդ կետ)*

**Հարց 151.** Ինչպիսի՞ սանդղակ է կիրառվում ռիսկերի վերլուծության նպատակով.

- քայլով տաս նիշանոց՝ չափորոշիչների գործակիցների 0.5-ից 1.5 միջակայքում

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 99-րդ կետ)*

**Հարց 152.** Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 2.6 է, ապա ռիսկի աստիճանը կլինի.

- 3

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 108-րդ կետ)*

**Հարց 153.** Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 6.5 է,

ապա ոհսկի աստիճանը կլինի.

- 4

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 108-րդ կետ)*

**Հարց 154.** Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ոհսկի ցուցանիշը 1.4 է, ապա ոհսկի աստիճանը կլինի.

- 1

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 108-րդ կետ)*

**Հարց 155.** Նշվածներից ո՞րը չի հանդիսանում ոհսկային խմբի տեսակ.

- չեզոք

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 110-րդ կետ)*

**Հարց 156.** Աուդիտի ենթակա միավորների ընտրանքի ծավալը որոշելիս բարձր ոհսկային խմբի բազմությունից պետք է ընտրել.

- ամբողջ բազմությունը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 111-րդ կետ)*

**Հարց 157.** Աուդիտի ենթակա միավորների ընտրանքի ծավալը որոշելիս զգայուն ոհսկային խմբի բազմությունից պետք է ընտրել

- բազմության 33%-ը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 111-րդ կետ)*

**Հարց 158.** Աուդիտի ենթակա միավորների ընտրանքի ծավալը որոշելիս միջին ոհսկային խմբի բազմությունից պետք է ընտրել.

- միջին ոհսկային խմբի բազմության 17%-ը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 111-րդ կետ)*

**Հարց 159.** Աուդիտի ենթակա միավորների ընտրանքի ծավալը որոշելիս ցածր ռիսկային խմբի բազմությունից պետք է ընտրել.

- ցածր ռիսկային խմբի բազմության 5%

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 111-րդ կետ)*

**Հարց 160.** Ինչպիսի՞ պարբերականությամբ են հաշվարկվում ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները.

- յուրաքանչյուր տարի

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 118-րդ կետ)*

**Հարց 161.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը գործունեության տարեկան հաշվետվությունում ներկայացնում է տեղեկատվություն՝ մարդկային և տեխնիկական ռեսուրսների.

- օգտագործման արդյունավետության վերաբերյալ

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 133-րդ կետ)*

**Հարց 162.** Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմման ընթացքում.

- պարտադիր հաշվի են առնվում կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի դիրքորոշումներն ու գերակայությունները

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 135-րդ կետ)*

**Հարց 163.** Ստորև նշվածներից ո՞րը չի հանդիսանում ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մաս.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների հաշվարկը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 136-րդ կետ)*

**Հարց 164.** Նշվածներից ո՞րը պետք է հաշվի առնի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը՝ ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմելիս.

- աուդիտի ռազմավարական ծրագրի հաստատումից հետո տեղի ունեցած ցանկացած զարգացումները և փոփոխությունները  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 144-րդ կետը)

**Հարց 165.** Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը յուրաքանչյուր տարի պետք է.

- համալրվի ևս մեկ տարով  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 153-րդ կետը)

**Հարց 166.** Աուդիտի իրականացման ընթացքում ո՞վ է կազմակերպում և համակարգում առաջադրանքի աշխատանքային խմբի աշխատանքները.

- առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը,  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 176-րդ կետը)

**Հարց 167.** Ի՞նչ ենք հասկանում՝ ասելով անհրաժեշտ աուդիտորական ապացույց.

- ձեռքբերված աուդիտորական ապացույցների որակ  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 200-րդ կետը)

**Հարց 168.** Ներքին հսկողության ո՞ր համակարգը թույլ չի տալիս որևէ գործընթացի կամ ընթացակարգի սխալ ընթացքը՝ մինչև գործընթացի մեկնարկը.

- կանխարգելիչ  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 216-րդ կետը)

**Հարց 169.** Ներքին աուդիտի գործունեության տարեկան հաշվետվության ո՞ր գլխում է անհրաժեշտ ներառել որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արդյունքները.

- ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողական  
(«Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 306-րդ կետը)

**Հարց 170.** Ո՞վ է իրականացնում հսկողություն՝ աուդիտի առաջադրանքի ընթացքում բացահայտված խախտումների շտկման միջոցառումների ժամանակացույցի նկատմամբ.

- ներքին աուդիտի ստորաբաժանումը

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 314-րդ կետ)*

**Հարց 171.** Նշվածներից ո՞րը չի հանդիսանում աուդիտի իրականացման հետ կապված ռիսկ.

- որակի երաշխավորման և բարելավման ծրագրի ձախողման ռիսկ

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 364-րդ կետ)*

**Հարց 172.** Նշվածներից ո՞ր դեպքի մասին որակի ծրագիրը չի տրամադրում կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին հիմնավորված հավաստիացում.

- ներքին աուդիտի ստորաբաժանումը պատշաճ կերպով կառավարում է կազմակերպության ֆինանսական կառավարման և հսկողության գործառույթները

*(ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. N 143-Ն հրամանի հավելվածի 368-րդ կետ)*

**Հարց 173.** Ո՞ր մարմինն է կազմակերպում հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննությունը.

- լիազոր մարմնի ղեկավարի սահմանած ստորաբաժանումը կամ ստորաբաժանումները

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 174.** Նշվածներից ո՞ր անձն իրավունք չունի մասնակցելու ներքին աուդիտորի որակավորման քննությանը.

- ով չունի բարձրագույն կրթություն

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 13-րդ և 14-րդ կետեր)*

**Հարց 175.** Ե՞րբ և ինչպե՞ս են կազմվում ներքին աուդիտորի որակավորման քննության թեստերը.

- անմիջապես քննության անցկացումից առաջ՝ յուրաքանչյուր մասնակցի համար

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետ)*

**Հարց 176.** Քանի՞ հարց է ներառում ներքին աուդիտորի որակավորման քննության թեստը.

- 50

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 21-րդ կետ)*

**Հարց 177.** Նշվածներից ի՞նչը չի թույլատրվում ներքին աուդիտորի որակավորման քննության ընթացքում.

- քննության մեկնարկից 5 րոպե առաջ քննասենյակ մուտք գործելը

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 22-րդ կետ)*

**Հարց 178.** Որքա՞ն միավոր պետք է ստանա ներքին աուդիտորի որակավորման քննության մասնակիցը՝ քննությունը հաղթահարելու համար.

- 40

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 26-րդ կետ)*

**Հարց 179.** Գործողության ինչպիսի՞ ժամկետ է սահմանված քննությունը հաջողությամբ հաղթահարած մասնակիցներին շնորհված ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման համար.

- ժամկետ սահմանված չէ

*(ՀՀ կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 38-րդ կետ)*

**Հարց 180.** Ո՞ր դեպքում է դադարում քննությունը հաջողությամբ հաղթահարած մասնակիցներին շնորհված ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման գործողության ժամկետը.

- հերթական տարեկան շարունակական մասնագիտական



վերապատրաստման ծրագիրը հաջողությամբ չավարտելու դեպքում  
(«*Կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 1-ին հավելվածի 38-րդ կետ*»)

**Հարց 181.** Ո՞ր կազմակերպություններն իրավունք ունեն հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտ իրականացնելու. կազմակերպություններ, որոնք ունեն ներքին և (կամ) արտաքին աուդիտի գործունեության առնվազն 3 տարվա փորձ

(«*Կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 2-րդ հավելվածի 1-ին կետ*»)

**Հարց 182.** Ո՞ր դեպքում է լիազոր մարմինը մերժում հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկում ընդգրկվելու նպատակով կազմակերպության կողմից ներկայացրած հայտը.

- դիմող կազմակերպությունը նախորդ 3 տարվա ընթացքում հանվել է ցանկից

(«*Կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 2-րդ հավելվածի 5-րդ կետ*»)

**Հարց 183.** Ո՞ր դեպքում է կազմակերպությունը հանվում հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար որակավորում ունեցող կազմակերպությունների ցանկից.

- կազմակերպության աշխատող հանդիսացող՝ որակավորված ներքին աուդիտորի կողմից ներքին աուդիտի առաջադրանքների իրականացման ժամանակ խախտվել են ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտները, որոնք հանգեցրել են առաջադրանքի արդյունքներով տրամադրված սխալ հավաստիացման

(«*Կառավարության 13.02.2014թ. N 176-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետ*»)

**Հարց 184.** Ո՞ւմ են ներկայացվում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության նկատմամբ իրականացվող մոնիթորինգի արդյունքները.

- պետք է ներկայացվեն կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը և հաստատվեն կազմակերպության ղեկավարի կողմից

(«*Կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 10-րդ կետ*»)

**Հարց 185.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին ու լիազոր մարմնին.

- պարտավոր է ներկայացնել տարեկան առնվազն մեկ անգամ

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 15-րդ կետ)*

**Հարց 186.** Արտաքին գնահատման նպատակն է պարզել.

- ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքի որակի ներքին վերահսկման համակարգը

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 17-րդ կետ)*

**Հարց 187.** Ներքին աուդիտի ստորաբաժանման ներքին գնահատման արդյունքների անկախ վավերացումն ընդգրկում է.

- փաստաթղթավորված ինքնագնահատման և մոնիթորինգի արդյունքների ներքին աուդիտի օրենսդրությանը համապատասխանության գնահատում և արտաքին գնահատողի կողմից անկախ վավերացում

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 24-րդ կետ)*

**Հարց 188.** Ո՞վ է կազմում արտաքին գնահատման վերջնական հաշվետվությունը և թերությունների վերացման, ինչպես նաև ներքին աուդիտի ստորաբաժանման հետագա զարգացման համար իրականացվելիք միջոցառումների ծրագիրը.

- արտաքին գնահատում իրականացրած խմբի ղեկավարը

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 22-րդ կետ)*

**Հարց 189.** Նշվածներից ո՞ր որակավորումը չի տրվում արտաքին գնահատման արդյունքում.

- ամբողջությամբ համապատասխանում է ստանդարտներին

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 32-րդ կետ)*

**Հարց 190.** Ո՞ւմ կողմից է ստորագրվում արտաքին գնահատման հաշվետվությունը.

- արտաքին գնահատում իրականացնողների և գնահատվող կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 33-րդ կետ)*

**Հարց 191.** Ո՞ւմ է տրամադրվում արտաքին գնահատման իրականացման արդյունքների մասին հաշվետվությունը.

- կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին
- *(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 34-րդ կետ)*

**Հարց 192.** Ի՞նչ պետք է ձեռնարկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը արտաքին գնահատման արդյունքներից հետո արված առաջարկությունների հիման վրա պետք է.

- վերանայի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը
- (ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 36-րդ կետ)*

**Հարց 193.** Ո՞վ է իրականացնում արտաքին գնահատումների արդյունքում ներկայացված առաջարկությունների նկատմամբ առաջնային հսկողությունը.

- այն կազմակերպության ղեկավարը, որտեղ իրականացվել է արտաքին գնահատում

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 39-րդ կետ)*

**Հարց 194.** Արտաքին գնահատման արդյունքներով ներակայացված առաջարկությունների կատարմանն ուղղված գործողությունների իրականացման մասին տեղեկատվությունը և ժամկետները պետք է.

- ներառվեն ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի հաշվետվությունում

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 40-րդ կետ)*

**Հարց 195.** Ո՞ր դեպքում լիազոր մարմնի կողմից չի իրականացվում կրկնակի արտաքին գնահատում.

- երբ արտաքին գնահատման արդյունքում լրացուցիչ պլանավորված միջոցառումների՝ դրանց կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ ներկայացվում է հաշվետվություն Լիազոր մարմնին

*(ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 41-րդ կետ)*

**Հարց 196.** Ո՞ւմ է տեղեկացնում արտաքին գնահատողների խումբն արտաքին գնահատումների ժամանակ ծառացած սահմանափակումների մասին.

- գնահատվող կազմակերպության ղեկավարին

*(«ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 1-ին հավելվածի 44-րդ կետ)*

**Հարց 197.** Ո՞վ է պատասխանատու ստուգող մարմինների կողմից ստուգման ենթարկված կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումում հայտնաբերված խախտումների (շեղումների) վերացման համար.

- կազմակերպության ղեկավարը

*(«ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 2-րդ հավելվածի 6-րդ կետ)*

**Հարց 198.** Ո՞վ է հսկողություն իրականացնում կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումն ստուգող մարմինների ստուգման արդյունքների ակտի հիման վրա կազմված և դրանով արձանագրված խախտումների (շեղումների) շտկման գործողությունների ծրագրով կատարվող գործողությունների նկատմամբ.

- ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը

*(«ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 2-րդ հավելվածի 7-րդ կետ)*

**Հարց 199.** Ո՞ւմ է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներկայացնում ներքին աուդիտի ստորաբաժանումն ստուգող մարմինների ստուգման արդյունքների ակտի հիման վրա կազմված և դրանով արձանագրված խախտումների (շեղումների) շտկման գործողությունների ծրագրի ժամանակացույցով սահմանված գործողություններից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ հաշվետվություն.

- ստուգող մարմնին

*(«ՀՀ կառավարության 08.08.2013թ. N 896-Ն որոշման 2-րդ հավելվածի 8-րդ կետ)*

**Հարց 200.** Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման ծրագրի շրջանակում ներքին աուդիտորը.

- յուրաքանչյուր տարին մեկ անգամ պարտադիր պետք է անցնի վերապատրաստում՝ 30 ժամ տևողությամբ և հանձնի թեստ

*(«ՀՀ ֆինանսների նախարարի 21.08.2014թ. N 541-Ն հրամանի հավելվածի 3-րդ և*



